Ի՞նչ է ուզում ասել հավերժության արվեստագետը

Զուլֆա Օհանյան

Ամեն ինչ ունի իր նախապատմությունը: Արամ Իսաբեկյանի համար այն սկսվեց անցյալ դարի 30-ականների սկզբին, երբ Թիֆլիսում՝ Գեղարվեստի ակադեմիայում ճակատագրի բերումով միմյանց հանդիպեցին երկու գեղեցիկ և երիտասարդ, տաղանդավոր և խանդավառ ուսանողներ, ասես նախախնամությամբ միմյանց համար նախասահմանված: Դրանք ապագա հայտնի գեղանկարիչներ Էդվարդ Իսաբեկյանն ու Արփենիկ Նալբանդյանն էին:

Ամեն ինչ ունի իր նախապատմությունը: Արամ Իսաբեկյանի համար այն սկսվեց անցյալ դարի 30-ականների սկզբին, երբ Թիֆլիսում՝ Գեղարվեստի ակադեմիայում ճակատագրի բերումով միմյանց հանդիպեցին երկու գեղեցիկ և երիտասարդ, տաղանդավոր և խանդավառ ուսանողներ, ասես նախախնամությամբ միմյանց համար նախասահմանված: Դրանք ապագա հայտնի գեղանկարիչներ Էդվարդ Իսաբեկյանն ու Արփենիկ Նալբանդյանն էին:





Ծնվել է 1952թ. սեպտեմբերի 26-ին Երևանում:

1970-1976թթ.ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության բաժինը:

1979 թվականից դասավանդել է նույն ինստիտուտում:

1990թ. արժանացել է դոցենտի,

1992թ.-ին՝ պրոֆեսորի կոչման:

1982թ.-ից ԽՍՀՄ նկարիչների միության անդամ է:

Յունեսկոյի պրոֆեսիոնալ նկարիչների միջազգային միության անդամ:

1993-1998թթ. եղել է Հայաստանի նկարիչների միության գեղանկարչության բաժնի վարիչ:

1990-1994թթ. եղել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսումնագիտական գծով պրոռեկտոր:

1994թ.-ից՝ արդեն Գեղարվեստի պետական ինստիտուտի ռեկտոր: Այժմ՝ Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիա:

2001թ. ՀՀ նկարիչների միության «Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու մեդալով: 2002թ. Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի խորհրդի անդամ:

2002թ. դարձել է բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ ակադեմիկոս:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ:

1976թ.-ից մասնակցել է բազմաթիվ խմբակային, այդ թվում նաև՝ միջազգային ցուցահանդեսների:

Անհատական ցուցահանդեսներ

1982-Երևան-Պրոֆ.Աբրահամյանի թանգարանում: 1987- Էջմիածին- Ազգային պատկերասրահի մասնաճյուղում: 1991-Հալեպ (Սիրիա)-Համազգային Արամ Մանուկյանի սրահում: 1995-Փարիզ (Ֆրանսիա)-In the City of Art international: 1996- Կահիրե (Եգիպտոս)-Կահիրեի բիենալեում: 1996-Փարիզ- «Գալերեա 20»-ում: 1997-1998- Մոնրեալում, Տորոնտոյում, Օտտավայում (Կանադա) և Նյու-Յորքում, Լոս Անջելեսում, Վաշինգթոնում (ԱՄՆ): 1998- Փարիզ (Ֆրանսիա) - In the City of Art international: 1998- Փարիզ -Ֆրանսիայում Հայաստանի



Արամ Իսաբեկյանը, ում 55 տարին է լրանում, ծնվել է արդեն կայացած գեղանկարիչների ընտանիքում: Մայրը որդուն իր հետ տանում էր պլեների, իսկ հոր աշխատանքին նա երջանկություն է ունեցել հետևելու ընդհուպ մինչև վերջին ժամանակները:

– Հայրս ինձ համար աշխատունակության չափանիշ էր, իմ պատկերացման մեջ նա ավելի շատ արվեստանոցում է մնացել, քան տանը: Նրա աշխատանքներն աչքիս առաջ բազմիցս փոխակերպվել են , և դա անընդհատ կերպափոխություն էր, ինչպես մուլտերում: Ձգտելով կատարելության, բացառիկ մշակութային գծերի՝ նա ջանք ու ժամանակ չէր խնայում: Նա Աստվածատուր տաղանդ էր, և ինչ երջանկություն է, որ երկար կյանքն այն իրականացնելու հնարավորություն ընձեռեց... Իսկ մայրս, ով կյանքից վաղ հեռացավ, այսօր համարվում է Հայաստանի լավագույն նկարչուհիներից մեկը: Ես իմ մեջ եմ կրում նրանց ցավը՝ մորս կյանքից վաղ հեռանալն ու տարիների հետ հորս վատացող տեսողությունը:

Հաջողության «կապույտ թռչնի» ետևից ստիպմարձակության: Նկարչի բազում անհատական ցուցահանդեսներից ես հիշում եմ այն, որ տեղի ունեցավ 1999 թվականին ազգային պատկերասրահում: Դստեր, հոր, գեղանկարիչ Փարավոն Միրզոյանի դիմանկարները, կոմպոզիցիաներ և նատյուրմորտներ, և ամեն ինչում ինչ-որ տոնականություն, և, հիրավի, գեղանկարչական (ամենից առաջ) վերաբերմունք պատկերվածին:

– Վաղ շրջանի իմ աշխատանքներում ես նմանակում էի Վան Գոգին, շատ էի սիրում նրան, բայց ամենից վեր էի դասում արվեստը: Մեծատառով արվեստը, լինի դա գեղանկարչություն, գծանկարչություն, քանդակ թե ճարտարապետություն:

1999 թվականի ցուցահանդեսն ինձ համար քննություն էր, ստեղծագործությանս մի փուլի փորձություն և ավարտ: Տարբեր ժանրերում և տեխնիկաներում աշխատելու պահանջ եմ զգում: Իսկ Հայաստանի վսեմությունն ու ներդաշնակությունը շատ բանով պայմանավորում են աշխատանքների մոտիվները, թեմատիկան և երանգավորումը...

Կա մի տարածված կարծիք, որ հայկական գեղանկարչությունը, հատկապես ժամանա-

2001թ. ՀՀ նկարիչների միության «Քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700 ամյակի» կապակցությամբ կազմակերպված հոբելյանական ցուցահանդեսում (հովանավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի) ներկայացված աշխատանքների համար արժանացել է 1-ին մրցանակի:

1991թ. Հայաստանի Հանրապետության անկախության 10-ամյակի կապակցությամբ պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան

ռիզ (Ֆրանսիա) - In the City of Art international: 1998- Փարիզ –Ֆրանսիայում Հայաստանի դեսպանության շենքում: 1999 - Երևան –Հայաստանի ազգային պատկերասրահում: 2001 - Երևան – ԵԳՊԱ-ի Ալբեր և Թովէ Բոյաջյան պատկերասրահում:

Ա. Իսաբեկյանի աշխատանքները պահպանվում են Հայաստանի թանգարաններում և Հայաստանի ու արտասահմանի մասնավոր հավաքածուներում:



կակիցը, բնութագրվում է գունային գամմայի զարդարականությամբ և ինտենսիվությամբ: Սակայն Ա. Իսաբեկյանի աշխատանքներում նկատելի է ոչ միայն գույների խրախճանքը, այլ գծերի հստակությունը, պատկերվող օբյեկտից չպոկվելու ունակությունը, փակուղի տանող ուղուց խուսափելը: Շրջապատող աշխարհն ու երազանքների աշխարհը պետք է օրգանապես միաձուլվեն և որոշակի ներդաշնակության մեջ լինեն: Իհարկե, այստեղ չի կարող լինել շտամպ կամ կլիշե: Գտնել սեփական ուղին արվեստում ոչ բոլորին է հաջողվում, նույնիսկ մեծ տաղանդի առկայության դեպքում:

– Երբ ես դիտում եմ մեծ վարպետների ված եմ Վելասկեսի ամեն մի վրձնահարվածին, ֆակտուրային, կարող եմ քանդակով և երաժշտությամբ արբել: Չէ՞ որ մարդն Աստծու հետ ստեղծում է այն, ինչը չկա բնության մեջ՝ կարծես լրացնելով այն...

42 տարեկանում դառնալով Գեղարվեստի ինստիտուտի ռեկտոր, Ա. Իսաբեկյանն առաջին հերթին մտահոգված էր այն բանով, որ թեկուզ մի քանի ուսանողների արտասահման գնալու և տարբեր երկրների արվեստին ծանոթանալու հնարավորություն ընձեռի: Հենց ինքն էլ օգտվեց 90-ականներից հետո ստեղծված շրջագայելու ազատությունից և եղավ Արևելքում, Միացյալ Նահանգներում, Կանադայում և Եվրոպայում, Փարիզում ընկերացավ Գարզուի և Ժանսեմի հետ: Ասում է, որ երջանիկ է Եգիպտոսը տեսնելու, Կահիրեի թանգարանն այցելելու համար: Իսկ բուրգերը, Մեռյալների քաղաքը, դեղին Նեղոսն արքայական գերեզմանոցների աստիճանների մոտ... Բայց նկարչի առանձնահատուկ սերն են Ֆրանսիան և Իտալիան:

– Ես եղել եմ Ամստերդամում, այցելել եմ Վան Գոգի թանգարանը, բայց այնտեղ ամեն ինչին հասու ես լինում տառացիորեն երեք օրում, իսկ Փարիզն անսպառ է: Դա, իրոք որ, աշխարհի մայրաքաղաքն է, ամեն մի անկյուն այնքան անկրկնելի է, որ ողջ կյանքիդ ընթացքում էլ չես կարող դա ըմբռնել: Դա հիրավի «տոն է, որ միշտ քեզ հետ է»: Ես ոտնատակ եմ տվել ողջ Փարիզը, զննել եմ փարիզյան մայթերի ամեն մի սանտիմետրը, եղել եմ բազում պետական և մասնավոր թանգարաններում, Գրանդ Օպերայում և Բաստիլիայի օպերայում: Իսկ գրադարանները... Ոչ վարձ է պետք, ոչ էլ ինչ-որ թղթեր ներկայացնել: Նստի ու կարդա ինչքան որ կուզես...

Վենետիկում նրան հրաշք էր թվում այն, որ իրեն տրված է քայլել այդ հողի վրա, դիպչել այդ քարերին:

– Վենետիկում ես այն տպավորությունն ունեի, որ սա մի մեծ թատրոն է իր դերասաններով, և մարդիկ ապրում են ասես բեմի վրա: Հին Վենետիկը անդորր, ուրախ



երկիր է: Յուրաքանչյուր տուն պալատ է, որտեղ հավաքված են հին վարպետների գործերը: Ասենք, Տիցիանի վրձնին պատկանող աշխատանքը պատկերում է այս ընտանիքի ինչ-որ հեռավոր նախնու և դարերով այստեղ կախված է: Ոչ ոք չի մտածում այն թանգարան հանձնել կամ վերականգնել այն: Եվ սրճարաններում նստած են զվարթ և արտաքնապես անհոգ մարդիկ: Այսպես, մեզ հետ ամեն օր խմում էր մի տիկին, ով, ինչպես պարզվեց, բարոնեսսա էր...

Սակայն ճամփորդություններից հետո մշտապես վիճակված է վերադառնալ Երևան: Գեղեցիկ, տաղանդավոր, հաջողակ Արամ Իսաբեկյա-











ստեղծագործությունները, ապա հավատում եմ, որ կա Աստված, ով մաքուր հոգու տեր մարդկանց տաղանդ է շնորհում: Ես ուզում եմ հասու լինել այնպիսի հրաշքի, ինչպիսին է Միքելանջելոյի «Ստրուկը»: Ես սիրահարնին շատ բան է տրված: Նույնիսկ իր ծնողների հուշը հարգում է ողջ երկիրը, ողջ հայ ժողովուրդը: Երևի թե մասնավոր պատմություններ չեն լինում, այլ կա մի, բոլորիս համար ընդհանուր, պատմություն ■